ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 մարտի 2024 թվականի N – Ա 80

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ 2022 և 2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԱԾ ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ կետով և համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2002 թվականի հունվարի 21-ի «Սյունիքի մարզպետի խրախուսանքի ձևեր հաստատելու մասին» N 7-Ա որոշմամբ հաստատված կարգի

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման 2022 թվականի մրցույթում հայագիտության ոլորտում բակալավրի կրթական ծրագրով «Լավագույն ուսանող» ճանաչված և 1-ին տեղ զբաղեցրած Գորիսի պետական համալսարանի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Մելանյա Թևոսյանին պարգևատրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով:
2. Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման 2023 թվականի մրցույթում հումանիտար գիտությունների ոլորտում բակալավրի կրթական ծրագրով «Լավագույն ուսանող» ճանաչված և 1-ին տեղ զբաղեցրած Գորիսի պետական համալսարանի «Պատմություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Աստղիկ Լալաբեկյանին պարգևատրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով:
3. Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման

2023 թվականի մրցույթում հումանիտար գիտությունների ոլորտում բակալավրի կրթական ծրագրով «Լավագույն ուսանող» ճանաչված և 2-րդ տեղ զբաղեցրած «Պատմություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Հայկուշ Արզանյանին պարգևատրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով:

4. Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման 2023 թվականի մրցույթում հայագիտության ոլորտում բակալավրի կրթական ծրագրով «Լավագույն ուսանող» ճանաչված և 2-րդ տեղ զբաղեցրած Գորիսի պետական համալսարանի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Անի Ղավալբաբունցին պարգևատրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով:

Ստորագրող
ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ
3712800290

2024-03-05 16:49:10 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. մարտի 5
ք. Կապան